ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*12 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թ.*

*ԹԻՎ 33*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն Ի Ն

Էլեկտրոնային տարբերակով Ձեզ է ուղարկվում Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2018թ. հունվարի 11-ին ընդունված որոշումները /արձ. 14/:

Առդիր՝ 6 էջ:

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

***Կատարող՝***
*Գ. Դավթյան*
*/0232/3-52-02*

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*11-ը հունվարի 2018թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 14*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 1 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 11.01.2018թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

5. ՀՀ Արագածոտնի մարզպետարանին համակարգիչ նվիրելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*11-ը հունվարի 2018թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 14*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 2 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1/5 կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել 2017 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի կատարողականը.

հազ. դրամ

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 518667.8 | 119782.9 | 638450.7 |
| Ծախսային մաս | 503687.4 | 137589.5 | 641276.9 |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*11-ը հունվարի 2018թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 14*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 3 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2018թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/5 և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասին՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2018թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
7. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

հազ. դրամ

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 557994.6 | 0 | 557994.6 |
| Ծախսային մաս | 557994.6 | 30768.2 | 588762.8 |
| Դեֆիցիտ | 0 | -30768.2 | -30768.2 |
| Պահուստային ֆոնդ | 28000.0 | 0 | 28000.0 |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*11-ը հունվարի 2018թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 14*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

*N 4 – Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աշտարակ քաղաքի Արարատյան փողոց N70 և Աշտարակի խճուղի N9 հասցեներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի պահպանման և սպասարկման համար առանձնացված համապատասխանաբար 0.2131հա և 0,24958հա հողամասերը ՀՀ կառավարության 07.09.2006թ. N 1398-Ն որոշմամբ սխալմամբ հանձնվել է Աշտարակ համայնքին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ քաղաքի Արարատյան փողոց N70 և Աշտարակի խճուղի N9 հասցեներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ, համայնքային սեփականություն հանդիսացող համապատասխանաբար 0.2131հա և 0,24958հա հողամասերն անհատույց նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*11-ը հունվարի 2018թ.*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 14*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

*N 5 – Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող մեկ հատ համակարգիչ նվիրել ՀՀ Արագածոտնի մարզպետարանին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն